ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԵՐՎԱՆԴԻ

ԵՐԵՎԱՆԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2024

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

СЕРГЕЙ ЕРВАНДОВИЧ ПЕТРОСЯН

ПРОБЛЕМЫ АДАПТАЦИИ НЕИСПОЛЬЗУЕМЫХ ЗДАНИЙ В ЕРЕВАНЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по специальности 18.00.01-" Архитектура "

ЕРЕВАН 2024

Ատենախոության թեման հաստատվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար' ճարտ. դոկտոր, պրոֆեսոր **Դ. Գ. Քերթմենջյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ' ճարտ. դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Գրիգորյան**

ճարտ. թեկն., ասիստենտ **Է. Գ. Վարդանյան**

Առաջատար կազմակերպություն' **«Հայնախագիծ» ԲԲԸ**

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հուլիսի 31-ին ժամը 14.00-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Ճարտարապետություն» 029 մասնագիտական խորհրդում:

Հասցեն' 0009, ք. Երևան, Տերյան փ. 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում:

Հասցեն' 0079, ք. Երևան Մառի փող. 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում'www.nuaca.am Սեղմագիրն առաքված է 2024 թվականի հուլիսի 1-ին:

Մասնագիտական խորհդի գիտական քարտուղար' ճարտ. դոկտոր, պրոֆեսոր

Լ. Վ. Կիրակոսյան

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и строительства Армении

Научный руководитель: доктор арх., профессор **Кертменджян Д. Г.**

Официальные оппоненты: доктор архитектуры, профессор **Григорян А.А.**

кандидат архитектуры, ассистент **Варданян Э.Г.**

Ведущая организация: **ОАО «Армпроект»**

Защита состоится 31 июля 2024 года в 14.00 часов на заседании специализированного совета 029 - «Архитектура» КВОН РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении (НУАСА).

Адрес: 0009, г. Ереван, ул. Теряна 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул. Марра 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am Автореферат разослан 1-го июля 2024г

Ученый секретарь Специализированного совета: доктор арх., профессор

Л. В. Киракосян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ատենախոսության թեման.

Ներկայացվող ատենախոսությունը նվիրված է հարուստ պատմամշակութային ժառանգություն ՀՀ մայրաքաղաք Երևանին:

Ուսումնասիրության նյութ են հանդիսանում ներկայումս Երևան քաղաքի տարածքում գտնվող չօգտագործվող կառույցները, որոնք թվագրվում են Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանին (1922-1991): Չօգտագործվող շենքերն այսօր միջավայրային և ճարտարապետական վերակառուցման ու արդիականացման կարիք ունեն, հետևաբար դրանց հարմարեցման խնդիրները վերջին տարիներին լայնորեն քննարկվում են, և մեծ արդիականություն են ձեռք բերել:

Վերջին տասնամյակներում աշխարհի տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Երևանում, ուշադրության կիզակետում են հայտնվել շենքերի և համալիրների հարմարվողական վերաօգտագործման ճարտարապետատարածական աշխատանքների կազմակերպման խնդիրները, դրանց նորովի օգտագործման հարցերը, որոնք լայն տարածում են գտել մեր օրերում: Դրանց վերաօգտագործումն, ու այդպիսով պահպանությունն, ունի ինչպես տնտեսական նկատառում, այնպես էլ մշակութային անհրաժեշտություն:

Թեման հիմնված է Երևան քաղաքի տարածքում գտնվող հասարակական և արտադրական բնույթի չօգտագործվող կառույցների հարմարեցման խնդիրների ուսումնասիրության վրա:

Ատենախոսության արդիականությունը.

Սկսած 1998 թվականից, հայաստանյան միջավայրում առաջ են քաշվել մի շարք պետական ծրագրեր ու ռազմավարական միջոցառումներ՝ կապված պատմամշակութային հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման վերաբերյալ, որոնցում սակայն ոչ բոլոր հուշարձաններն են ընդգրկվել: Փաստորեն, դրանց ուսումնասիրությունը դեռևս առջևում է:

Այսօր խիստ անհրաժեշտ է Երևանի խորհրդային շրջանին վերագրվող պատմամշակութային շենքերի պահպանությունն ու վերաօգտագործումն ապահովող ռազմավարական միջոցառումների մշակումը, քանզի անօգտագործելի դարձած ազգային հարստությունը կյանքի կոչելու կարիք ունի: Նմանօրինակ միջոցառումները անհետացումից կփրկեն ճարտարապետական արժեք ունեցող այդ շենքերն ու համալիրները:

Փաստորեն, անհետաձգելի է չօգտագործվող կառույցների (հասարակական և արտադրական բնույթի) փաստագրավերլուծական ուսումնասիրությունը, պահպանությունն ու արդիականացումը՝ նկատի ունենալով կերպարային ճարտարապետական միջավայրի համասեռացման, գործառութային ու տեխնիկական, տնտեսական, գեղագիտական և այլ հարցերը:

Փաստորեն, կոնսերվացման ու պահպանության, վերափոխման ու նորովի և նոր նպատակի համար հարմարեցվող չօգտագործվող շենքերին ուղղված միջոցառումները նոր շունչ կհաղորդեն Երևանին, որն իր հերթին պետք է համապատասխանի ազգային ժառանգության պահպանության պետական որոշումների դրույթներին, ինչպես նաև ԻԿՕՄՕՍ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային կոնվենցիաներում ներառված պահպանության ընդունված չափանիշներին:

Հետխորհրդային շրջանի ճարտարապետական պրակտիկայում հարմարվողական վերաօգտագործման և փոխակերպման բավական շատ օրինակներ կան, այդ թվում՝ «Ալեքսանդր», «Արարատ» հյուրանոցների շենքերը, «Երևան» մոլը, «Փեթակ» առևտրի կենտրոնը, բազմաթիվ կինոթատրոնները, բնակելի շենքերի առաջին հարկերը: Մյուս կողմից՝ Երևան քաղաքի դիտարժան արտադրական, հասարակական շենքերի ու համալիրների հարմարվողական վերաօգտագործման, փոխակերպման ճարտարապետահատակագծային և տարածական կազմակերպման հիմախնդիրները, դեռևս բազմակողմանի հետազոտությունների առարկա են, քանի որ այսօր պահանջվում են համալիր մոտեցումներ, քննարկումներ և գիտական ընդհանրացումներ: Այս տեսանկյունից արդիական է նաև նպատակահարմարության հարցի դիտարկումը ուսումնասիրման ենթակա համալիրների շահագործման տեսակետից, քանի որ դրանք, լինելով դեռևս խորհրդային ժառանգության դրսևորումներ, ոչ միշտ է, որ հարմար են ժամանակակից օգտագործման համար, թեև նոր օգտագործումը տնտեսական տեսանկյունից միշտ էլ դրական արդյունք ունի:

Փաստորեն, հարցը ոչ միայն ճարտարապետական ուսումնասիրության կարևորությունն է, այլև դրանց հետազոտությունը ներկայումս գիտական անհրաժեշտություն է: Այս տեսանկյունից անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում, համեմատական, իրավիճակային, գրաֆոանալիտիկ վերլուծություն, այսինքն՝ հուշարձանի կամ օբյեկտի դիտարկումը առաջադրանքի պատրաստման նպատակով, ներառյալ՝ շենքի տեղեկատվական ապահովումը, տարածքային հատակագծի ամրագրումը, գլխավոր հատակագիծը, դեֆեկտային ակտերի ընտրությունը և վերաօգտագործման ինտերվենցիան, հայեցակարգերի բնութագրումը, ինչպես նաև նոր ստացված վերաօգտագործման շենքի

տիպաբանական հատկությունների, հորինվածքի և շինարարական համակարգի մոդիֆիկացիաները և այլն, որոնք գիտականորեն ձևակերպվել են սույն աշխատության էջերում՝ գիտական հանրությանը մանրամասնություններով ներկայացնելու նպատակով:

Այլ խոսքով՝ միանգամայն անհրաժեշտ է պատմական այդ շրջափուլին վերագրվող շենքերի պահպանությունը, վերաօգտագործումը կամ թանգարանացումը՝ իր բոլոր ճարտարապետական միջոցառումներով հանդերձ:

Մեր օրերում քաղաքային միջավայրում առկա նմանօրինակ շենքերի հարմարեցվող վերաօգտագործման հարցերի ուսումնասիրությունն հավուր պատշաճի իրականացնելու նպատակով հարկ է նախ և առաջ գտնել հարմար ռազմավարություն, ուստի այս համատեքստում անգնահատելի է մասնագիտական գրականության ու աղբյուրների հետազոտումը, ինչպես նաև՝ հարմարվողական վերաօգտագործման արտասահմանյան և հայրենական փորձի ուսումնասիրությունը: Փաստորեն, այս համատեքստում հուշարժան են նաև ժամանակակից պրակտիկների ու տեսաբանների առաջադրած հայեցակարգերի ուսումնասիրությունները, որոնք մեկտեղվել են սույն աշխատության մեջ:

Ատենախոսության նպատակն է վերլուծության միջոցով ուսումնասիրել, վերհանել ճարտարապետական ժառանգության նշանակալի, դիտարժան արտադրական և հասարակական շենքերի ու համալիրների հարմարվողական վերաօգտագործման հիմնախնդիրները՝ առաջադրելով Երևան քաղաքում դրանց կիրառման առանձնահատկությունները, ներդրման ուղիները և ռազմավարությունները՝ ռացիոնալ ժամանակակից հայեցակարգերի համաձայն:

Ատենախոսության գիտական խնդիրներն են.

- ուսումնասիրել հարմարվողական վերաօգտագործման արտասահմանյան և հայրենական փորձը.
- բացահայտել Երևանում ճարտարապետական ժառանգության վերաօգտագործման և փոխակերպման արդի առանձնահատկությունները, ընթացքը, պայմանները և միտումները.
- բացահայտել արժևորման և հարմարվողական վերաօգտագործման գործոնները, չափանիշները, սկզբունքներն ու օրինաչափությունները.
- վերլուծել ընտրված օրինակների համարվողական առանձնահատկությունները իրենց խնդիրներով հանդերձ:

Ատենախոսության առարկան.

Հարցը առնչվում է Երևան քաղաքի խորհրդային շրջանի ճարտարապետական ժառանգությանը՝ ի մասնավորի նշանակալի և դիտարժան արտադրական ու հասարակական շենքերի, համալիրների հարմարվողական

վերաօգտագործման ճարտարապետահատակագծային և տարածական կազմակերպման հիմախնդիրներին: Այդ կապակցությամբ նկատի են առնվել նաև համաշխահային կոնվենցիաների դրույթներն ու չափանիշները (ԻԿՕՄՕՍ, ՅՈՒՆԵՍԿՕ) և դրանցում տեղ գտած օրինակները, դիտարկվել են դրանց պահպանության հարցերը:

Ատենախոսության մեթոդը հիմնված է հին և նոր շենքերի համեմատական փաստագրական վերլուծության կամ որակական բնութագրման վրա: Ուսումնասիրությունը ներառում է ինչպես հրապարակի վրա առկա գրականության, այնպես էլ ճարտարապետական նախագծերից ու արխիվային նյութերից ստացված տվյալների ուսումնասիրությունն, քննական վերլուծությունը և տեղային այցելություններից արված արձանագրությունները: Ընդգրկված շենքերը վերլուծվել են պատմականության մեկնաբանությամբ և ժամանակակակից օգտագործման կտրվածքով:

Ատենախոսության սահմանները.

Ուսումնասիրությունն ընդգրկում է Երևան քաղաքի սահմաններն ու խորհրդային ժառանգությունը, հետևաբար ժամանակագրականորեն մեր ուշադրության կիզակետում է նշված շրջանին վերագրվող շենքերի վերահարմարեցումը՝ անկախության ժամանակաշրջանում դրանց վերաօգտագործման համար: Ուսումնասիրվող շենքերը հիմնականում Երևան քաղաքի հասարակական և արտադրական շենքեր են, որոնք օգտագործման գործառույթներով նույնական են: Անդրադարձ է կատարվել հանրահայտ համաշխարհային ճարտարապետական օրինակներին, դիտարկվել են քննվող ժամանակաշրջանին վերագրվող արդեն իսկ վերափոխված ու կյանքի կոչված նախագծերը Երևանում:

Ատենախոսության նորույթը.

Հայրենական ճարտարապետության պատմության կարևոր շրջափուլերից է խորհրդային ժառանգության կազմավորումը, ուստի ընտրված շենքերը ուսումնասիրվել են յուրովի և առանձին հետաքրքրություն են ներկայացնում:

Ներկայացված ատենախոսությունում գիտական կարևոր նորույթների թվում են.

- Ատենախոսության մեջ առաջին անգամ ընդհանուր մեթոդական վերլուծությամբ ներկայացվում են խորհրդային ժամանակաշրջանից ժառանգված հասարակական և արտադրական շենքերի անկախության տարիների հարմարվողականության ուսումնասիրությունը:
- Առաջին անգամ ցուցակագրվում և ուսումնասիրվում են խնդրո առարկա շենքերը: Ներկայացվում են դրանց չափագրություններն ու

փաստագրական վերլուծությունները՝ իրենց հարմարվողական խնդիրներով: Դրանք լուսաբանվում են համաձայն տարածքային, գլխավոր հատակագծային, կտրվածքային և ծավալատարածական լուծումներով:

Ատենախոսության նորույթը կայանում է նաև նրանում, որ խնդրո առարկայի նմանօրինակ մեթոդական ուսումնասիրությունը կատարվում է առաջին անգամ, հետևաբար,

1. քննարկվել են վերահարմարեցվող շենքերի փոփոխությունները և դրանց վերարտադրված տարածական նոր լուծումները՝ քաղաքի ճարտարապետական ժառանգություն հանդիսացող շենքերի և շինությունների արժևորման ու հարմարվողական վերաօգտագործման համալիր հայեցակարգում:

2. լինելով խնդրո առարկա, շենքերը դիտարկվում են ժամանակակից ճարտարապետության տիպաբանական, ռեգիոնալ և գլոբալիզացիայի տարիների համատեքստերում:

Թեմայի մշակվածությունը.

1.Գրադարանային նյութերի ուսումնասիրություն. կատարվել է գրադարանային նյութերի և ճարտարապետական նախագծերի տվյալների հավաքագրում: Իրականացվել է ամբարված տեղեկատվության դասակարգում ու խմբավորում:

2.Տեղային ուսումնասիրություն (լուսանկարում, քարտեզագրում, ճարտարապետական ոճի ու հատակագծի հետազոտում և այլն). դաշտային կամ տեղային ուսումնասիրությունը ներառում է քաղաքային միջավայրում անմիջական դիտարկման միջոցով տվյալների բազային հավաքումը, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում պարզել այս կամ այն շենքի ու համալիրի վիճակը, և այն վերլուծելու միջոցով նպաստել ուսումնասիրության համար տվյալների հավաքմանը: Փաստորեն, կատարվել է տեղային այցելություն՝ գրանցելով զննման արդյունքները:

3.*Քաղաքային միջավայրում առկա խորհրդային շենքերի վերաբերյալ արխիվային նյութերի ուսումնասիրություն.* ըստ էության կատարվել է արխիվային, գրադարանային ու տեղային հետազոտությունների համահավաք տվյալների ընդհանրացում:

Գրականության քննական տեսություն.

Սույն ուսումնասիրության իրականացման նպատակով հետազոտվել են հրապարակի վրա առկա տեղական և արտասահմանյան բազմաթիվ հրապարակումներ, այդ թվում՝ արխիվային ու գրադարանային նյութեր: Այնուհետև հետազոտվել ու համակարգվել, մշակման է ենթարկվել դրանցից

ստացված ինֆորմացիան: Հարկավ, ուսումնասիրված մի շարք աշխատությունների, փաստացի նյութի քննական ուսումնասիրությունը խիստ կարևորություն է ունեցել: Հետևաբար, տեղային արձանագրված նյութերն ուսումնասիրելու հետ զուգահեռ՝ քննականորեն համադրվել են գրադարանային ու արխիվային նյութերի վերաբերյալ եղած տվյալները, ինչպես նաև ներկայացվող թեմային առնչվող բազմաթիվ հայրենական ու օտարալեզու գրադարանային արժեքավոր աշխատություններ, հոդվածների ժողովածուներ ու մամուլի հրապարակումներ:

Այդ հրատարակություններից առանձնապես կարևոր աշխատություններ են համարվում Ն. Թայլերի «Պատմական պահպանում. դրա պատմության, սկզբունքների և պրակտիկայի ներածություն» (2018), Ֆ. Բանդարիի և Ռոն վան Օերսի համատեղությամբ գրված «Պատմական քաղաքային լանդշաֆտ. ժառանգության կառավարում քաղաքային դարում» (2012), Լ.Վոնգի «Ադապտիվ վերաօգտագործում. շենքերի կյանքի երկարացում» (2016) և այլոց արժեքավոր օտարալեզու ուսումնասիրությունները:

Մեծ կարևորություն ունեն ակնարկվող խնդրի ու ժամանակաշրջանին վերաբերող աշխատությունները, այդ թվում՝ Մ.Է. Առաքելյանի հեղինակած «Փոխակերպումը՝ որպես ռեսուրս կայուն քաղաքային դիմագծի ձևավորման համար» (2015) աշխատանքները, ինչպես նաև՝ Է.Մ. Սարգսյանի ու Մ.Է. Առաքելյանի «Արդյունաբերական տարածքների իրացման խնդիրները զարգացող քաղաքի կառուցվածքում» (2014) և «Արտադրական տարածքների փոխակերպման և վերաօգտագործման խնդիրները» (2015) և այլ հոդվածներ: Ներկայացվող թեմային առնչվող տեսապատմական կարևոր տեղեկատվական աշխատություններ ունեն նաև Ն.Գ. Պետրոսյանը, Դ.Գ. Քերթմենջյան և այլոք:

Հարմարեցված օգտագործման շենքերի կամ համալիրների մասին եղած գրականությունը, տեսության և միջազգային օրինակներին վերաբերվող նյութերը բազմաթիվ են, որոնք ներառվել են ներկա աշխատության մեջ, և ըստ էության, ծառայել որպես մեթոդական վերլուծության օրինակներ: Ատենախոսությունն իր դրույթներով հենվել է վերոնշյալ աշխատությունների ուսումնասիրությունների վրա:

Հրապարակի վրա առկա երևանյան հարմարեցված շենքերին վերաբերող աշխատությունները կարևոր են և հազվագյուտ, քանզի դրանց վերաբերյալ հայտնի են ընթացիկ տեղեկատվական բնույթի մասնակի նյութեր: Այսինքն՝ Երևանի հարմարեցված շենքերի մասին ընդհանուր և մեթոդական ուսումնասիրությունը դեռևս ամբողջական չէ: Այնուամենայնիվ, հատկանշանակ են նաև Վ. Առաքելյանի «Երևան քաղաքի արդյունաբերական զոտու ֆունկցիոնալ

վերակազմավորման զարգացման ուղիները» (2016թ.) թեմայով ատենախոսությունը և Դ.Գ. Քերթմենջյանի «Հայկական արդյունաբերական ճարտարապետության զարգացումը նոր ժամանակներից սկսած» (2021թ.) հոդվածը, որոնք բովանդակությամբ Հայաստանի արդյունաբերական շենքերին նվիրված աշխատանքներ են: Դրանք երկուսն էլ դասակարգողական և փաստագրական բնույթի են, չեն ներառում վերաօգտագործման հարցերը: Փաստորեն, ի տարբերություն նշվածներին սույն աշխատությունն ունի մեթոդական և հարմարվողական ճարտարապետության ընթացիկ բնույթ:

Ցավոք, ներկայումս այս համատեսքտում դեռևս կա հայալեզու և տեղական ուսումնասիրությունների ու աշխատությունների բաց՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով, հատկապես դրա անհրաժեշտությունը նշվում է ոլորտին մոտ կանգնած շատ գիտնականների կողմից:

Ատենախոսության փորձաքննությունը.

Ներկայացվող ուսումնասիրությունն անհրաժեշտ է սույն ոլորտով զբաղվող պետական ու մասնավոր կառույցների մասնագետների համար: Դրանք կարող են նաև ընդգրկվել ուսումնական նոր առարկաների դասընթացների ծրագրերում: Ուսումնասիրության արդյունքները հնարավոր է ներդնել ճարտարապետական ժառանգություն հանդիսացող շենքերի վերակառուցման կամ վերականգնման ձեռնարկներում, ինչպես նաև ցանկացած ճարտա-րապետական գործնականում կիրառելի նախագծերում, որոնք կնպաստեն և ազդակ կդառնան Երևան քաղաքի ճարտարապետական ժառանգության հարմարվողական վերաօգտագործման սկզբունքների բյուրեղացմանը: Ատենախոսության դրույթները հրատարակվել են հոդվածների ձևով (ՀՀ-ում և Ուկրաինայում):

Հրապարակումներ.

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 6 գիտական հոդված:

Ատենախոսության կառուցվածքը.

Աշխատանքը բաղկացած է 118 տեքստային էջից՝ ընդգրկելով ներածությունը, միմյանց հաջորդող երեք գլուխները իրենց եզրակացություններով, ընդհանուր եզրակացությունը, թեմայի հետ կապված 67 անուն օգտագործած գրականության ու հրատարակությունների ցանկը, ինչպես նաև՝ 46 աղյուսակ պարունակող հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացվում են թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, գիտական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում քննարկվել են աշխարհի տարբեր քաղաքների, նախկինում լքված շենքերի և շինությունների վերաօգտագործման ճարտարապետությունը, որը հայտնի է նաև որպես հարմարվողական վերաօգտագործում, կամ շենքի վերաբաշխում, հին շենքի վերաօգտագործման գործընթաց այլ նպատակով, ոչ այն, ինչ ի սկզբանե նախագծվել կամ կառուցվել է: Այս պրակտիկան զգալի տարածում է գտել վերջին տարիներին իր բազմաթիվ առավելությունների շնորհիվ, ներառյալ՝ կայունությունը, մշակույթի պահպանումը և տնտեսական արդյունավետությունը: Ուսումնասիրվել են շենքերի վերաօգտագործման ճարտարապետության սկզբունքները, առավելությունները, մարտահրավերներն ու օրինակները, մատնանշելով՝ դրա կարևորության ու ներդրման համապարփակ պատկերացումը ժամանակակից քաղաքաշինության մեջ:

Ճարտարապետական ժառանգության հարմարվողական վերաօգտագործումը կարևոր միջոց է հիմնական արժեքի մարմնավորման, ժառանգության ճարտարապետությանը նոր կյանք հաղորդելու և ժամանակակից զարգացումների մեջ ինտեգրելու համար: Ցույց է տրվել, որ ճարտարապետության ու քաղաքաշինության ոլորտում շենքերի վերաօգտագործումը հսկայական նշանակություն ունի, ինչպես կայունության, այնպես էլ մշակույթի պահպանության տեսանկյունից: Այնուամենայնիվ, ոչ բոլոր վերաօգտագործման փորձերն են ընթանում սահուն: Որոշ կառույցներ ենթարկվում են «պաթոլոգիայի» նման գործընթացի, որն իրենից ներկայացնում է ենթարկվող փոխակերպումների հաջորդականության համակարգված ուսումնասիրություն: Այս պաթոլոգիան արժեքավոր պատկերացումներ է տալիս տարբեր երկրներում կիրառվող մեթոդների և մոտեցումների վերաբերյալ՝ առաջարկելով փորձառությունների հարուստ գրբելեն, որը կարող է տեղեկացնել ու կողմնորոշել ապագա վերաօգտագործման նախաձեռնությունների մասին:

Շենքերի կամ համակառույցների հարմարեցումը կատարվում է երկու մեծ բաժանումներով՝ հուշարձան և սովորական շենքերի օրինակներով: Հուշարձան շենքերի հարմարեցումը ղեկավարվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի օրենսդրական ակտերով, իսկ սովորական շենքերի հարմարեցումը կատարվում է ճարտարապետական միջավայրի վերակենդանացման կամ ռեվիտալիզացիայի տեսության օրենքներով:

Միջազգային զուգահեռների ուսումնասիրությունը կարևորվում է վերլուծվող շենքերի պաթոլոգիական հերթականությամբ: Դրանք հիմնականում կարող են լինել՝ վերակառուցում, հարմարեցումներ, ռեգեներացիաներ և այլն:

Ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ ամեն մի հուշարձանի կամ համակառույցի համար տիպական են բնագիր շենքի և վերափոխված շենքի հարմարեցման փաստագրումը՝ ներառելով հատակագծերի, կտրվածքների և ծավալատարածական պլանավորման ծրագիրը: Հարմարեցման գործընթացում էական են նաև ուսումնասիրվող համակառույցի միջավայրային հարմոնիայի տարրերի պահպանությունը՝ դոմինանտ, հորինվածքի կենտրոնը, տարածական առանցքները, ինչպես նաև՝ հորինվածքային հատկանիշներն ու օրինաչափությունները:

Երկրորդ գլխում քննարկվել է Հայաստանի անկախության տարիներին վերաօգտագործված հասարակական շենքերի գործառույթները, որոնք որոշ ընդհանրություններ ունեն միջազգային զուգահեռների և տեսական դրույթների հետ: Երկու դեպքում էլ կատարվում են նոր հասարակական շենքերի տիպաբանական ձևակերտումներ:

Ինչ վերաբերում է հորինվածքային և շինարվեստի առանձնահատկություններին, ապա դրանք նույնական են միջազգային փորձի հետ:

Քննարկվել են նաև Երևան քաղաքում խորհրդային ժամանակաշրջանից ժառանգված հասարակական շենքերի հարմարվողական վերաօգտագործման առանձնահատկությունները, առկա փորձի ուսումնասիրության մեթոդով: Այդ շենքերն են՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի դեսպանատները, Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնես-կենտրոնը, «Ալեքսանդր» հյուրանոցը, «Ծածկած շուկա» առևտրի կենտրոնը, Հայաստանի ամերիկյան համալսարանը:

Երրորդ գլխում քննարկվել է անկախության տարիներին Հայաստանի մայրաքաղաք Երևանի արտադրական շենքերի ռեգեներացիան: Արտադրական շենքերի վերականգնումը քաղաքաշինության կարևորագույն ասպեկտներից է, հատկապես անկախությունից հետո, երբ քաղաքները ենթարկվում են զգալի սոցիալ-տնտեսական վերափոխումների, անհրաժեշտ է դառնում անգործունակ շենք, շինությունների նպատակային վերագործարկումը: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը ձեռնամուխ եղավ տնտեսական, մշակութային և քաղաքային վերակառուցման ճանապարհի հարթեցմանը:

Խորհրդային տարիներին Երևանը խիստ արդյունաբերականացված էր՝ ԽՍՀՄ պլանային տնտեսության կազմում հիմնված բազմաթիվ գործարանների և

արտադրական օբյեկտների առկայության փաստի շնորհիվ: Այս արդյունաբերական շենքերը առանցքային նշանակություն ունեցան քաղաքային պլատֆորմի և տնտեսական բազայի ձևավորման գործում:

Երևանում արտադրական շենքերի վերականգնման առաջնային շարժառիթներից մեկը տնտեսության աշխուժացումն է: Այս կառույցների հարմարվողական վերաօգտագործումը կարող է նպաստել տնտեսական աճին՝ ներգրավելով նոր բիզնեսներ, խթանել ձեռներեցությունը՝ ստեղծելով աշխատատեղեր: Արդյունաբերական տարածքների վերափոխումը հետապնդում է առևտրային, մշակութային և բնակելի տարածքների, քաղաքային տնտեսության աշխուժացման և կենսամակարդակի բարելավման ռազմավարության նպատակ:

Բնապահպանական կայունությունը ևս մեկ կարևոր գործոն է, որը խթանում է արտադրական շենքերի վերականգնմանը: Գոյություն ունեցող կառույցների հարմարվողական վերաօգտագործումը նվազեցնում է նոր շինարարության անհրաժեշտությունը՝ դրանով իսկ նվազագույնի հասցնելով ռեսուրսների սպառումն ու շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Քննարկվել է նաև Երևան քաղաքում խորհրդային ժամանակաշրջանից ժառանգված արտադրական շենքերի հարմարվողական վերաօգտագործման առանձնահատկությունները, առկա փորձի ուսումնասիրության մեթոդով: Այդ շենքերն են՝ «Ռոսսիա մոլ», «Ռիո մոլ», «Երևան մոլ», «Գարաժ մաստեր մոլ» առևտրի կենտրոնները և «Գրանդ սպորտ» սպորտային համալիրը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրության հիման վրա հարմարեցված շենքերի կայացման պրակտիկայում Երևանում առկա են հետևյալ ճարտարապետական խնդիրները և միջոցառումները, որոնք մեթոդականորեն կարելի է ներկայացնել ճարտարապետական ընդունված հայեցակարգերով՝ տիպաբանական, հորինվածքային, նախագծագործառութային հասկացություններով:

Ա. Տիպաբանական առումով.

- Շենքերի վերաօգտագործումը ներկայիս ամենաարդիական խնդիրներից մեկն է ժամանակակից ճարտարապետության մեջ: Այդ կապակցությամբ շենքերի վերաօգտագործումը ունի երկու հիմնական մոտեցում:
    - Առաջին մոտեցումը խորհրդային ֆորմացիայից հետո նոր սկսվող ժամանակաշրջանում կառույցների նոր գործառույթի ստեղծումն է:
    - Երկրորդ մոտեցումը ժամանակակից ճարտարապետության մեջ նորաստեղծ շենքերի տեսակների ներմուծումն է, ինչպես

գերատեսչական շենքերի նորովի պահանջն է ԱՊՀ երկրների իրականությունում, այնպես էլ՝ հայկական իրականությունում (բանկեր, համագործակցության շենքեր, դեսպանատներ, նոր առևտրի շենքեր՝ մոլեր և այլն)։ Նոր շենքեր են նաև ժամանակակից ճարտարապետության մեջ ռեգիոնալ և տրանսպորտային շենքերի տարածումը իրենց բոլոր ենթակառուցվածքներով և շենքերի ցանցային հարցերով հանդերձ։

Բ. Հորինվածքային առումով.

- Հաջորդ հայեցակարը հին շենքերին և վերաօգտագործման առաջադրանքներին ներկայացվող կոմպոզիցիոն կայացումն է կամ նոր համակառույցի հարմոնիայի ստեղծումն, ինչը փաստագրական՝ երկրորդ և երրորդ գլուխներում բնութագրվել է։ Այն հիմքում ունի հորինվածքի տեսության հատկանիշների, օրինաչափությունների ու ռճական միասնականության առանձնահատկությունների պահպանությունն։
- Հորինվածքային առումով նախորդ գլուխների հարմոնիայի ստեղծման պահանջը մնում է նույնական՝ հորինվածքի կենտրոնի համադրման միջոցով։
- Նույնը պետք է ասել շինարվեստի՝ կոնստրուկցիաների ու տեխնոլոգիաների, պահանջների մասին։

Գ. Նախագծային գործառույթները.

- Գերխնդիր է երկրագնդի կլիմայի փոփոխություններով պայմանավորված հին և նոր շենքերում ու համալիրներում կայունության, էկո ճարտարապետության, էներգակոնսերվացման խնդիրների կայացումը, ինչպես նաև ուրբան մեծացման հարցերի հարմարեցումը, որ միջավայրային նոր օգտագործման կենսական հարցերից է։
- Շենքերի նոր օգտագործման անբաժան մասն են ինչպես համակարգչային ճարտարապետության մեթոդների ներմուծումը, այնպես էլ թվային ճարտարապետության տեխնոլոգիաների յուրացումը։
- Ի հավելումն նշվածների՝ հայկական ժամանակակից ճարտարապետության մեջ տեսական հուշարձանապահպանության խնդիրների արտացոլումը իր մեջ ներառում է հուշարձան շենքերի անասթիլոզի, կոնսերվացիայի, արդիականացման տեսակետներ, որոնք բխում են նաև Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԻԿՈՄՈՍ-ի օրենսդրական պահանջներից։

- Մյուս խնդիրը վերաօգտագործման հարցերում ժամանակակից միջազգային ճարտարապետության նորույթների արտացոլումն է, որը տեխնոլոգիական բնույթ է կրում և կոչվում է պաթոլոգիա:
- Ատենախոսության մեջ վերաօգտագործման, մասնավորապես, արտադրական և հասարակական տեսակների միասնաբար ներգրավումը, պայմանավորված է տվյալ շենքերի տեսակների նման գործառույթներով: Ընդ որում, ժամանակակից ճարտարապետության մեջ, ինչը տվյալ դեպքում համընկնում է Հայաստանի անկախության տարիների տասնամյակների հետ, Երևանը իր խնդիրներով պետք է դասել որպես փոքր քաղաք, որն ունի սահմանափակ ֆինանսական ներդրման հնարավորություններ: Այսինքն՝ հարմարվողական ճարտարապետությունը պետք է դիտարկել որպես ռեգեներացիայի կատեգորիա և ոչ թե ինքնուրույն նոր կառույցի իրականացում:
- Անկախության տարիների հայկական ճարտարապետության կարևոր զարգացում կամ ձեռքբերում պետք է համարել ռեգենեացիաների մեթոդի կիրառությունը: Փաստորեն, Հայաստանը հանդիսանալով սահմանափակ նյութական հնարավորություններ ունեցող երկիր, մայրաքաղաք Երևանի ժառանգած շենքերի վերաօգտագործման գործընթացում նախապատվությունը տրվել և տրվում է ռեգենեացիոն պրակտիկային, ինչպես առկա է Մ.Մաշտոցի հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի ընդարձակման օրինակում, Կասկադի զարգացման գործընթացներում, Ցեղասպանության հուշահամալիրի և թանգարան-ինստիտոուտի մեծացման գործառույթում, Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ առնչվող զանազան հաստատությունների ռեգեներացիաներում և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հետևյալ գիտական աշխատանքներում

1. Պետրոսյան Ս.Ե., Լքված արդյունաբերական գոտիների ֆունկցիոնալ փոխակերպման ժամանակակից միտումները // ՃՇՀԱՀ Տեղեկագիր, Հ. I, 2020, էջ, 38-43:
2. Petrosyan S.E., Problems of reusing unused buildings in yerevan as an important component of modernizing the panorama of a developing city.// Actual scientific research in the modern world, Issue 1(105), 2024, pp. 318-326.

3. Petrosyan S.E., Trends of reorganization of productive and public spaces in different countries of the world. // Actual scientific research in the modern world, Issue 2(106), 2024, pp. 251-269.
4. Petrosyan S.E., Environmental spatial planning problems in the case of reused buildings // Actual scientific research in the modern world, Issue 3(107), 2024, pp. 295-301.
5. Petrosyan S.E., Modern trends in functional transformation of abandoned public areas. // Actual scientific research in the modern world, Issue 4(108) part 2, 2024, pp. 242-248.
6. Petrosyan S.E., Trends in the reuse of unused buildings of architectural heritage not included in the architectural monuments. // Actual scientific research in the modern world, Issue 5(109), 2024, pp. 43-48.

СЕРГЕЙ ЕРВАНДОВИЧ ПЕТРОСЯН

ПРОБЛЕМЫ АДАПТАЦИИ НЕИСПОЛЬЗУЕМЫХ ЗДАНИЙ В ЕРЕВАНЕ

Тема диссертации- «Задачи приспособления неиспользуемых сооружений в Ереване», можно сказать, одна из самых актуальных архитектурных тем столицы Армении. Ереван, обладая богатым историко-культурным наследием, а также многочисленными общественными и промышленными зданиями, построенными в советские годы, сегодня сталкивается с проблемой реконструкции и модернизации неиспользуемых сооружений. Их приспособление и переиспользование позволит избежать разрушения зданий, представляющих культурную ценность, а переиспользование производственных и общественных зданий станет поводом для сохранения как экономических, так и территориальных ресурсов, а также восстановления архитектурного облика города.

Проведен анализ архитектурного наследия, строительно-планировочных и пространственно-организационных основных задач приспособления переиспользования значимых и эффектных промышленных и общественных комплексов сооружений советского периода города Еревана. В связи с этим, также были приняты во внимание положения и стандарты мировых конвенций (ЮНЕСКО, ИКОМОС) и найденные в них примеры, а также были рассмотрены вопросы их сохранения.

Сегодня крайне необходима разработка стратегических мер по обеспечению сохранности и использования историко-культурных зданий советского периода в Ереване, что предполагает государственную регистрацию, изучение, сохранение, ремонт, реставрацию и использование историко-культурных памятников. С этой точки зрения был продемонстрирован системный подход, проведен сравнительный и ситуационный анализ, то есть наблюдение за памятником или объектом с целью подготовки задания, в том числе предоставление информации о здании, фиксация территориального и генерального плана, отбор дефектных актов и повторное вмешательство, характеристика понятий, а также модификации типологических свойств, состава и строительной системы вновь полученного здания, его переиспользования и т. д., которые были научно сформулированы с целью подробного представления научного сообщества на страницах этой работы.

Научными задачами диссертации являются:

- изучение зарубежного и отечественного опыта приспособленческого переиспользования;
- определение текущих характеристик, процессов, условий и тенденций переиспользования и трансформации архитектурного наследия в Ереване;
- определение факторов, критерий, принципов и моделей оценок и приспособленческого переиспользования

• анализ рассмотренных приспособленческих особенностей выбранных примеров вместе с их проблемами.

Формирование советского наследия - один из важных периодов в истории отечественной архитектуры, поэтому выбранные сооружения изучались отдельно и представляют особый интерес.

Среди важных научных новаций в представленной диссертации можно выделить:

- Впервые в диссертации в общем методологическом анализе представлено исследование приспособления общественных и промышленных сооружений периода независимости, унаследованных от советских времен.
- Впервые перечислены и изучены рассматриваемые сооружения. Представлены их метрики и документальный анализ приспособленческих проблем. Они охватываются по территориальным, проектным и объемно-пространственным решениям.

  Новизна диссертации состоит в том, что такого рода методическое изучение рассматриваемого предмета происходит впервые, следовательно:

  1. впервые в комплексной концепции оценки и адаптивного переиспользования зданий и сооружений, являющихся архитектурным наследием города, рассмотрены модификации реконструированных зданий и воспроизведены их новые пространственные решения.

  2. Впервые эти здания рассматриваются в контексте типологических, региональных и глобализационных годов современной архитектуры.

  Первая глава информативна по содержанию, она координирует исторический обзор темы, изучение местного и международного опыта. Во второй главе на примерах представлены тенденции приспособления общественных сооружений города Еревана за годы независимости. В третьей главе представлены тенденции регенерации производственных зданий в Ереване в годы независимости. На примерах освещены особенности приспособления зданий советского наследия, и представлено комплексное исследование с

  учетом основных задач наблюдений за приспособлением общественных зданий и локального изучения, на основе которых можно будет предложить соответствующую стратегию их переиспользования и механизмы реализации. В заключениях делается подведение итогов и обобщение изученной темы.

SERGEY ERVAND PETROSYAN
PROBLEMS OF ADAPTATION OF UNUSED STRUCTURES OF YEREVAN

The theme of the dissertation study "Problems of Adaptation of Unused Structures of Yerevan" may be said to be one of the architectural current issues of the Armenian capital. Having a rich historical and cultural heritage, as well as a large number of public and industrial buildings built in the Soviet Union period, today Yerevan faces the problem of reconstruction and modernization of unused structures. Their adaptation and reuse will allow to avoid the destruction of buildings of cultural value, and the reuse of industrial and public buildings will become a reason for saving both economic and territorial resources, as well as restoring the architectural view of the city.

The architectural heritage of the Soviet period of the city of Yerevan, the problems of architectural planning and spatial organization of the adaptive reuse of significant and spectacular industrial and public building complexes have been analyzed. In this regard, the provisions and standards of world conventions (UNESCO, ICOMOS) and the examples detected in them have also been taken into consideration, the issues of their protection have been considered.

Today, it is highly necessary to develop strategic measures to ensure the preservation and use of historical and cultural buildings attributed to the Soviet period in Yerevan, which implies the state registration, study, plans for preservation, repair, restoration and use of the historical and cultural monument structures. From this point of view, a systematic approach was made, a comparative, situational and analytical analysis was performed, i.e. the observation of a monument or object with the aim of task preparation, including the information provision of the building, territorial plan fixation, general plan, selection of defect acts and reuse intervention, characterization of concepts, and also the modifications of the typological properties, composition and construction system of the newly obtained building for reuse , etc., this has been scientifically formulated in order to be presented in detail to the scientific community in the pages of this dissertation.

The scientific problems of the dissertation are as follows:

- to study foreign and domestic experience of adaptive reuse;
- to identify the current characteristics, process, conditions and trends of reuse and transformation of architectural heritage in Yerevan;
- to identify factors, criteria, principles and patterns of valuation and adaptive reuse;
- to analyze the considered features of the selected examples along with their problems.

The formation of the Soviet heritage is one of the important periods in the history of domestic architecture, so the selected buildings were studied locally and are of special interest.

Essential scientific innovations in the presented dissertation include:

- For the first time, the study of the adaptation of public and industrial buildings inherited from the Soviet period during the years of independence is presented in this dissertation with a general methodological analysis.
- The buildings of main tasks are listed and studied for the first time. Their measurements and documentary analyzes with their adaptive issues are presented. They are covered according to territorial, general plan, sectional and volumetric-spatial solutions.

The novelty of the dissertation also lies in the fact that a similar methodical study of the subject of the main task is carried out for the first time. Therefore

1. for the first time, the modifications of re-adaptable buildings and their reproduced new spatial solutions were discussed in the complex concept of valuation and adaptive reuse of buildings and structures that are the architectural heritage of the city.

2. for the first time, the buildings of the main task are considered in the contexts of typological, regional and globalization years of modern architecture.

The first chapter is informative in its content, which coordinates the historical overview of the topic, the study of local and international experience. In the second chapter, the adaptation trends of public buildings in Yerevan during the years of independence are presented through examples.In the third chapter, the tendencies of the regeneration of the industrial buildings in Yerevan during the years of independence are presented, highlighting the features of the adaptation of Soviet heritage buildings through examples and presenting a comprehensive research, taking into account the main observational issues of the adaptation of public buildings and local studies, on the basis of which it will be possible to propose an appropriate strategy for their reuse and implementation mechanisms. In the conclusions, a summary and generalization of the studied topic is made.